սոյն. քաղց և ծարաւ՝ յետ կենաց հացին և ջրոյն՝ ամն երեքհարիւր և երեք,[1] դարձեալ ոչ արարեր անտես և ոչ պահեցեր ոխս, այլ առաքեր նոր առաքեալ, ի նոյն տոհմէ զհաւնիմ և զհամայնից. և ետուր զնշանս քո ի ձեռս նորա, և առաքեցեր Աստուած փարաւոնի։ Որ եկն նշանաւք և արուեստիւք և եհան յերկաթի հալոցէն, ի դիւապաշտութենէն և ի մեղաց, և անցոյց յանապատն Սիոն. և մկրտեաց յամպն և ի ծովն, ի ջուրն և ի հոգին, և սուզեաց զանմարմին փարաւոն. և եկեղեցացուցեալ հաւաքելով ի մի, և կերակրեր երկնիջակ հացիւն և արբուցանէր վիմահոս ջրովն որ բխէ յորովայնէ՝ և խաղա ի կեանսն յաւիտենից։ Ցարուցեր հովիւս վեց ի ծննդոց նորա, և առ իս դատարեցուցեր զսէր զարմի իմոյ. զորս զպատճառն քեզ միայն է գիտելի։

Դարձեալ զոհանամ բարեբանեմ զքեզ՝ որ յիմում ժամանակի առաքեցեր նոր աւետարեր և վարդապետ, որ զքո բանդ անխարդախ սերմանէ յերկիր կենդանի, և ոռոգէ զանկեալս ի տան Ցեսառն և ի գաւիթս քո.

---

1. Ակնարկ Թարկոս եւ Բարդուղիմէոս առաքեալների քարոզութեան վերայ, որ կրկնուեց 303 տարի յետոյ Լուսաւորչի օրով։